«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 2

30 ապրիլի 2019 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Գյումրու մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Գյումրու մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ Գյումրու մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կ.Պ.Պետրոսյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. մասնաճյուղը զգալի աշխատանք է իրականացրել ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման, ուսումնական գործընթացը գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներին ու հանձնարարականներին համապատասխան կազմակերպելու, ուսումնական ծառայությունների և գիտահետազոտական աշխատանքների որակը բարձրացնելու ուղղությամբ: Ուսումնական գործընթացը կազմակերպվել է հաստատված դասատախտակին ու ժամանակացույցին համապատասխան:

2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում մասնաճյուղի ուսանողների ընդհանուր թիվը բոլոր կրթաձևերում կազմել է 457, որից առկա ուսուցման բակալավրիատում՝ 262, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 69, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 120, հեռակա ուսուցման մագիստրա-տուրայում՝ 6:

Ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակի ամփոփիչ քննաշրջանի արդյունքներով ուսման առաջադիմությունը մասնաճյուղում կազմել է. առկա ուսուցման բակալավրիատում՝ 85%, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 93%, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 55%, հեռակա ուսուցման մագիստրա-տուրայում՝ 83%: 6 ուսանողներ հեռացվել են ցածր առաջադիմության, այդ թվում նաև՝ ուսման վարձերի պարտքերի պատճառով:

2018-2019 ուսումնական տարում մասնաճյուղի դասախոսների թիվը 52 է, որից՝ 5 դոկտոր, պրոֆեսոր, 10 թեկնածու, դոցենտ, 2 դոցենտ, 8 թեկնածու, 27 ասիստենտ և դասախոս: Մասնաճյուղն ունի 5 հայցորդ:

2018-2019 թթ. մասնաճյուղում իրականացվել են աշխատանքներ մշակված ռազմավարության հետևյալ ուղղություններով.

1. Կրթական գործընթացի բարեփոխումներ:
2. Գործունեության միջազգայնացում:

3. Ռեսուրսային ապահովվածություն:
4. Կառավարման բարելավում ու ընթացակարգերի մշակում:
5. Ուսումնական գործընթացի և գիտական գործունեության բարձրացմանը նպաստող այլ աշխատանքներ:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝**
   1) ակտիվացնել աշխատանքները մագիստրատուրայում դասավանդող դասախոսների ընտրության և բարձրորակ դասախոսական կադրերով ապահովելու, ինչպես նաև մատուցվող ծրագրերի և համապատասխան նյութի որակը բարձրացնելու ուղղությամբ,
   2) ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) գործունեությունը՝ առավելագույնս ներգրավելով հետազոտական աշխատանքի ունակություններով օժտված ուսանողներին և մագիստրանտներին,
   3) սերտորեն համագործակցել ՀՊՏՀ արտաքին կապերի դեպարտամենտի ու լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ:

3. **Սույն որոշումը քննարկել Գյումրու մասնաճյուղի խորհրդի և ամբիոնների նիստերում ու ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված հանձնարարականներն իրականացնելու համար:**

4. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Տ.Ս.Մնացականյանին և արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն Պ.Վ.Ջանգուլյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Ա. Հայրապետյան**

2019 թ. ապրիլի 30
Երևան